

## Ծ Ր Ա Գ Ի Ր

ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈՒՐԱՅ ՔԱՂԱՔՈՒՄ 2021  
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ը  
«ՄՏՔԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ, ԱՊԱԳԱՅԻ ՍՏԵՂԾՈՒՄ» ԽՈՐԱԳՐՈՎ «ԴՈՒՐԱՅ  
ԷՔՍՊՈ-2020» ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՄԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

### Նախաբան

Մեր երկրի մասնակցության հայեցակարգը կառուցվել է «Էթնոթեք» գաղափարի շուրջ: Անվանումը կլինի «Դուրայ 2020 Հայաստան, Էթնոթեք», իսկ կարգախոսը՝ «Նորարար մտքեր»:

Անվանումն արդեն հուշում է, որ այսպիսով աշխարհին ենք ներկայանում մեր էթնիկ առանձնահատկություններով և տեխնոլոգիական հավակնություններով:

Հայեցակարգը հիմնված է այն համընդհանուր բաղադրիչների վրա, որոնց վրա են կառուցվում յուրաքանչյուր ազգի դեմքն ու ինքնատիպությունը՝ պատմություն, լեզու, կրոն, մշակույթ, գիտություն, կրթություն, սփյուռք:

Միավորելով դրանք 4 խմբում՝ նույն տրամաբանությամբ կահավորվելու և զոնավորվելու է նաև բուն տաղավարը: Այսպիսով, այցելուներն անցնելու են հետևյալ 4 հատվածներով և համապատասխան տեխնիկական ու տեխնոլոգիական լուծումներով հագեցած տաղավարում կառուցվածքային, մեխանիկական, թվային ու ինտերակտիվ էլեմենտների միջոցով ծանոթանալու հայկական ինքնության առանձնահատկություններին, հայկական ծագման համաշխարհային նշանակություն ունեցող գործիչներին ու երևույթներին: Հիմնական շեշտը դրվում է գիտական մտքի, տեխնոլոգիական և արդյունաբերական պոտենցիալի վրա:

Հայոց պատմությունն ու մշակույթը լի են ծածկագրերով, հետևաբար, մենք հրավիրում ենք ճանապարհորդելու Հայաստանի շուրջ ժամանակի մեքենայով, ինչպես նաև ազգի ձևավորման ծածկագրերով: Չէ՞ որ բարձր տեխնոլոգիաների դարում անհնար է գոյատևել առանց կոդերի:

## **Մասնակցության կարևորությունը և ծրագրի նպատակը**

Նմանատիպ միջոցառումները կազմակերպվում են հինգ-տաս տարին մեկ անգամ և ունեն կարևոր նշանակություն միջազգային ինտեգրացիոն գործընթացների տեսանկյունից: Այս տիպի միջոցառումներին մասնակցությունը հնարավորություն է ստեղծում ներկայացնելու երկիրը համաշխարհային հանրությանը:

Հայաստանը մասնակցել է նախորդ նմանատիպ միջոցառումներին: Հայաստանի մասնակցությունը «Դուրայ 2020» ցուցահանդեսին կարևորվում է համաշխարհային հանրությանն ի ցույց դնելու առկա հնարավորությունները, ներդրումային ներուժը ու գրավչությունը, դրանով իսկ նպաստելու Հայաստանի էլ ավելի ճանաչելիության բարձրացմանը:

Դուրայ 2020-ը բացառիկ հնարավորություն է հանդես գալու նույն հարթակում աշխարհի 192 պետությունների հետ, ստեղծելու նոր բիզնես կապեր, մշակութային, տնտեսական զարգացման հեռանկարներ, տեխնոլոգիական առաջադեմ հանրության հետ շփման ու համագործակցության նպաստավոր առիթ:

Իսկ սույն ծրագրի նպատակն է նախանշել այն միջոցառումների և գործողությունների համակարգը, որը կապահովի Հայաստանի պատշաճ մասնակցությունը միջոցառմանը:

## **Լոգոտիպի փիլիսոփայությունը**

Հայաստանը տարվա մեծագույն բիզնես-մշակութային իրադարձությանը ներկայանում է «Էթնոթեք» կոնցեպտով, որի հիմնական գաղափարը երկրի տեխնոլոգիական ապագայի կառուցումն է՝ անցյալի լավագույն ավանդույթների վրա հիմնվելով: Համաձայն հայեցակարգի՝ ստեղծվելու են նաև համապատասխան լոգոտիպ և ֆիրմային ոճի ուղեցույց:

«Դուրայ 2020 Էքսպոյի» մեր տարբերանշանն առաջին հայացքից կհիշեցնի QR կոդ՝ որպես ինֆորմացիայի հասանելիության ամենաարագ միջոց: Լոգոտիպի առանցքը հնագույն գորգագործության մեջ ընդունված Կենաց ծառի

խորհրդանշանի պիքսելային պատկերն է՝ Հայաստանի Հանրապետության պետական դրոշի գույների ներառմամբ: Այստեղ գորգանախշը խորհրդանշում է անցյալն ու ավանդականը, իսկ պիքսելը, որպես ցանկացած թվային պատկերի հիմնական միավոր, արտացոլում է երկրի տեխնոլոգիական զարգացման տեսլականը:

### **Ցուցահանդեսի տաղավարի նկարագրությունը**

Տաղավարի ընդհանուր մակերեսը 213 քառ. մ է: Վերջինս բաղկացած կլինի երկու հարկից: Առաջինում տեղակայված կլինեն ցուցահանդեսը և ինտերակտիվ սրահը, իսկ երկրորդ հարկում՝ 90 քառ. մ տարածքով հանդիպումների սրահը:

Ցուցահանդեսային տաղավարը բաժանվելու է չորս հիմնական հատվածի:

#### **Առաջին հատված-Պատմություն, մշակույթ**

Այս հատվածում ներկայացվելու են հայ ժողովրդի պատմությունը, մշակույթը և գիտությունը, որոնք միավորվում են նորագույն տեխնոլոգիաների հետ: Այստեղ դեկորացիայի և տեսանյութերի միջոցով փոխանցվում է Հայաստանը ներկայացնող պատմական ու մշակութային ինֆորմացիա, որը ներառում է տարբեր ժամանակաշրջանների ունիկալ ձեռքբերումները, որոնք հայտնի և ճանաչելի են դարձնում Հայաստանն իբրև երկիր և հային՝ որպես ազգ:

#### **Երկրորդ հատված-Մտավոր ներուժ**

Այս հատվածում կներկայացվեն հայկական գենի, հայկական մտքի ու մտածողության դրսևորումները, եզակի երևույթներ ու հայտնագործություններ, գիտական մտքի պոտենցիալ ու համամարդկային նշանակության ձեռքբերումներ: Սկսած հնագույն ծածկագրերից՝ Արևախաչից, ու գաղտնագրերով հայոց այբուբենի ստեղծումից մինչև մարդկության կյանքը փոխած ինդուստրիալ հայտնագործություններ՝ գունավոր հեռուստատեսություն, ջրի ծորակ, մեքենայի ավտոմատ փոխանցումատուփ, դոլարի գույն, մեկանգամյա օգտագործման խմելու ձողիկ, պաղպաղակի վաֆլե բաժակ, վարսահարդարիչ, բետոնախառնիչ, շնչառական ինգալյատոր, զինվորական թթվածնային դիմակ, ՄՌՏ սարք, և այս շարքը դեռ երկար կարող է շարունակվել:

#### **Երրորդ հատված-Կրթություն**

Հայերի համար իրենց երեխաներն աշխարհի կենտրոնն են: Հետևաբար, առաջնահերթ ներդրումները պիտի արվեն հենց երեխաների զարգացման մեջ, քանի որ ապագան նրանց ձեռքում է: Այս հատվածում ներկայացվելու են գիտության ձեռքբերումները՝

ԹՈՒՄՈ կենտրոնը, ՔՈԱՖ-ը, Դիլիջանի միջազգային դպրոցը, Արմաթ լաբորատորիաները, Պիքսարթը՝ որպես վերն ասվածի ապացույց:

### **Չորրորդ հատված-Տուրիզմ և հյուրընկալություն**

Այս հատվածում կներկայացվեն Հայաստանի արևային օրերի քանակի, ջրային ռեսուրսների առատության, եղանակային 4 դրսևորումների առկայության և հանգստի կազմակերպման հնարավորությունները, ինչպես նաև հայկական հողի վրա աճեցված պտուղներն ու ազգային խոհանոցի առանձնահատկությունները:

Տաղավարը հագեցած է լինելու նաև պիքսելային պատով, ձգվող բաններներով, մեծ և փոքր էկրաններով ու կենաց ծառով:

Կենաց ծառը տաղավարում և, առհասարակ, մեր մասնակցության փիլիսոփայության մեջ անկյունաքարային նշանակություն ունի Կենաց ծառի առկայությունը: Այս գաղափարի մեջ ներդրվել են կենսափորձային իմաստությունները և բնության օրինաչափությունների պատկերացումները:

Սա հայկական ինքնության ալեգորիկ տեղայնացումն է ամբողջ աշխարհին հայտնի մշակութաբանական խորհրդանիշ հանդիսացող կենաց ծառի սիմվոլիզմով: Այն ընդգրկում է մեր ծագումը՝ խոր արմատներից մինչև հեռուն հասնող տերևները: Հայ ազգի կյանքի խորհրդանիշ-վկան է ու շարժիչ ուժը: Ճյուղերից մեկը համապատասխան լուսային լուծմամբ ներկայացվելու է իբրև չորացած, ինչը խորհրդանշում է մեր պատմության ողբերգական ամենացավոտ էջը՝ Հայոց ցեղասպանությունը:

Կենտրոնում տեխնոլոգիական լուծմամբ վառվելու է հավերժության հայկական ամենահին նշանը՝ արևախաչը:

Համապատասխան առիթների համար տաղավարի վերջնամասում նախատեսված է դեգուստացիոն հատված, որտեղ հրամցվելու է հայկական

ազգային ուտեստներով հյուրասիրություն փոքր չափաբաժինների ձևաչափով (fingerfood):

### **Երկրորդ հարկ**

Տաղավարի երկրորդ հարկում նախատեսված են հանդիպումներ, գործնական շփումներ, B2B ձևաչափով բանակցություններ, Հայաստանի՝ արդեն վերբալ ներկայացում ազդեցիկ մարդկանց, պոտենցիալ գործընկերների ու ներդրողների:

### **Տեսահոլովակների պատրաստումը**

Պատշաճ ներկայացման համար կարևոր նշանակություն ունի նաև համապատասխան տեսահոլովակների պատրաստումը, որոնք կօգտագործվեն ինչպես ցուցահանդեսի ընթացքում, այնպես էլ դրանից հետո:

Նախատեսվում է հետևյալ հոլովակների պատրաստում՝

#### **1. Բիզնես համագործակության տեսահոլովակը**

Հոլովակի նպատակն է պոտենցիալ հովանավորին ներկայացնել Դուբայում կազմակերպվող համաշխարհային ցուցահանդեսը, ընդգծել Հայաստանի մասնակցության կարևորությունը և շահագրգռել մասնակցել ցուցահանդեսին՝ այդպիսով նաև ձեռք բերելով ֆինանսական ներդրումներ:

Հոլովակը նախատեսված է B2B հանդիպումներին և ցուցահանդեսի կազմակերպման էտապում շնորհանդեսների շրջանակներում ցուցադրման համար՝

- հոլովակի ֆորմատը՝ ինֆոգրաֆիկ,
- հոլովակի լեզուն՝ հայերեն,
- տևողությունը՝ 00:04:34:

#### **2. Լոգոտիպի փիլիսոփայության մասին բացատրական տեսահոլովակը**

Հայաստանի ներկայացման և ընդհանուր կոնցեպցիայի կարևորագույն հիմնաքարի՝ լոգոտիպի, բացատրական հոլովակն է: Նախատեսված է որպես գովազդ Հայաստանում և Էմիրություններում ցուցադրման համար՝

- հոլովակի ֆորմատը՝ 3D անիմացիա,
- լեզուն՝ հայերեն/ անգլերեն,
- տևողությունը՝ 00:00:57:

### **3. «Էթնոթեք» տաղավարի բացատրական, վիզուալ լուծումների մասին տեսահոլովակը**

Տաղավարի վիզուալ ներկայացում՝ «Էթնոթեք» տաղավարի բացատրական, վիզուալ լուծումների մասին տեսահոլովակի պատրաստում կազմակերպիտեի հետ քննարկման և ցենզուրայի հաստատման համար: Հոլովակը պատմում է ցուցահանդեսի ընդհանուր կոնցեպտի և փիլիսոփայության մասին, տաղավարի տեխնիկական հագեցվածության և զոնավորման մասին, յուրաքանչյուր մասի մանրամասն նկարագրմամբ՝ միաժամանակ ցուցադրելով դեկորատիվ և վիզուալ լուծումները, նախատեսվող ինստալյացիաները՝

- հոլովակի տեսակը՝ անիմացիա, նախապես տրամադրված ինտերիեր դիզայնի և դեկորացիաների հիման վրա,
- ներկայացման լեզուն՝ անգլերեն,
- տևողությունը՝ 00:01:43:

### **4. «Ինչու՞ է Հայաստանը մասնակցում Էքսպո 2020-ին» տեսահոլովակ-անոնսը**

Բացատրական տեսահոլովակ Էմիթություններում կազմակերպվող համաշխարհային ցուցահանդեսի մասշտաբի, նպատակի, հեռանկարների և, մասնավորապես, Հայաստանի մասնակցության առավելությունների մասին: Հոլովակի նպատակն է Հայաստանում մեդիայի միջոցով մարդկանց տալ ինֆորմացիա ցուցահանդեսի և մեր մասնակցության կարևորության մասին: Հոլովակը նաև նախատեսված է մամլո ասուլիսներին և շնորհանդեսներին ցուցադրելու համար:

Հոլովակի ցուցադրումը նախատեսված է PR արշավի սկզբում պրոպագանդելու համար՝

- հոլովակի ֆորմատը՝ անիմացիա,
- լեզուն՝ հայերեն,
- տևողությունը՝ 00:01:35:

## **5. Հայաստանի տեսարժան վայրերի հոլովակը**

Տաղավարում Հայաստանը տուրիստական հետաքրքրության ասպեկտից ներկայացնող հոլովակ է, որը ներկայացնելու է սեզոնային կադրեր, տեսարժան վայրեր, զբոսաշրջային նշանակության տեղանքներ, մարզային նկարահանումներ, ջրային կադրեր և այլն: Տվյալ հոլովակը հետագայում ընդհանուր տեսակոնտենտի մաս է կազմելու՝

- ներկայացված է առանց գեղարվեստական մշակման, հանդիսանում է բազային հումք,
- տեսակը՝ տեսանյութ,
- տևողությունը՝ 00:00:43:

## **6. Հայաստանի օրվա միջոցառման շնորհանդեսային ֆիլմը**

Ալ Վասլ պլազայի գմբեթ-էկրանի վրա պրոյեկտվող այցեքարտային հոլովակ: Հայաստանին անծանոթ մարդուն մեր երկրի դարավոր պատմության ու էթնիկ առանձնահատկության մասին պատկերացում կազմել օգնող կոնցեպտուալ ֆիլմ՝

- հոլովակի ֆորմատը՝ անիմացիա,
- տեսակը՝ տեսանյութ,
- տևողությունը՝ 00:07:20:

## **Բրենդրուքը**

Ֆիրմային ոճի մշակված ուղեցույց, որը կանոնների հավաքածու է և սահմանում է, թե ինչպես պետք է օգտագործվի ու ցուցադրվի տարբերանշանը, ինչպես նաև նախատեսում է բոլոր այն դրսևորումները, որոնք անթույլատրելի են: Հստակ սահմանվում է լոգոյի ադապտացիան ըստ չափերի, համատեղ կիրառությունն այլ լոգոների հետ, ֆիրմային տառատեսակը, գունաափսակը, վիզուալ պատկերը և այլն:

Նկարագրվում են նաև լոգոյի էլեմենտներից ստեղծված նախշի կիրառությունը որպես գովազդային նյութերի դիզայնի մաս, ներդրումը սոցիալական մեդիայում:

Ուշադրություն է դարձված կորպորատիվ ստանդարտներին, սահմանված են էլեկտրոնային ստորագրության ձևը, այցեքարտի, ձևաթղթի, ծրարների, թղթապանակի, պրես-վոլի, ուլ-ափ բաններների դիզայնը, ներկայացված են բրենդավորված պարագաների օրինակներ:

### **Նախատեսվող միջոցառումները**

Դուրայ 2020 Էքսպոյի ընթացքում կիրականացվեն տարբեր թեմատիկ միջոցառումներ, որոնք ներկայացված են որոշման N 2 հավելվածում:

Էքսպոյի օրերին կկազմակերպվի հատուկ միջոցառում՝ ազգային օր: Հայաստանի օրվա հստակ ամսաթիվը կհայտարարվի պաշտոնական պատվիրակության ժամանմանը զուգընթաց: Այն կունենա հետևյալ արարողակարգը՝

- ԱՄԷ և ՀՀ տաղավարների տուր,
- աուդիովիզուալ շնորհանդես Ալ Վասլ պլազայում,
- դրոշի բարձրացում և օրհներգի հնչեցում,
- մշակութային ելույթներ,
- համերգային շոու ծրագիր,
- ազգային օրվա ամբողջ ընթացքը նկարահանվելու է:

Ալ Վասլ պլազայի գմբեթը հսկայական էկրան է, որի վրա ազգային յուրաքանչյուր օրվա միջոցառման շրջանակում հեռարձակվելու է տվյալ երկրի այցեքարտային հոլովակը:

### **PR պլանը**

Այն միտված է երկու թիրախային լսարանի վրա՝ ներքին և արտաքին: Արշավի ընտրված գործիքակազմի օգնությամբ աշխարհին ներկայացնում ենք մեզ ու մեր երկիրը, մեր պոտենցիալը, համագործակցության եզրերը, զարգացած ու զարգացող ճյուղերը, իսկ մեր հայրենակիցներին տեղեկացնում ենք Էքսպոյի համաշխարհային նշանակության և Հայաստանի մասնակցության կարևորության մասին:



### **Հովանավորչական փաթեթները**

Նախատեսվում է մշակել համագործակցության փաթեթային առաջարկներ հետաքրքրված անձանց և կազմակերպությունների համար: Նախատեսվում է կազմակերպել հանդիպումներ պոտենցիալ ներդրողների հետ հնարավոր համագործակցության ամենաարդյունավետ ուղիները քննարկելու և համաձայնության գալու շուրջ:

### **Ծրագրի ֆինանսավորումը**

Ծրագրի ֆինանսավորումը նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, կազմակերպիչ երկրի տրամադրած օժանդակության միջոցների հաշվին, և կարող են ներգրավվել նաև մասնավոր հատվածի միջոցները:

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորման ընդհանուր գումարը գնահատվում է 650 մլն դրամ, որն ըստ օպերատորների ներկայացված է որոշման N 3 հավելվածում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ծ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ